ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԼՈՍՈՒԹՅՈՒՆ

Ս. Ս. ԱՄԻՐՅԱՆ, *Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1986, 640 էջ։*

Գրախոսվող մենագրությունն իր բովանդակությամբ ու կառուցվածքով էապես տարբերվում է Ալ. Մյասնիկյանի մասին մինչ այժմ գրված աշխատություններից։ Նրա հեղինակը Ալ. Մյասնիկյանի դրական ժառանգությունը քննել է նրա հեղափոխական պրակտիկ գործունեության հետ սերտորեն շաղկապված։ Աշխատությունը գրված է արխիվներից, գրականությունից և պարբերական մամուլից վերցված հարուստ տվյալների, կուսակցական ու պետական փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա, մարքս—լենինյան մեթոդոլոգիայով և մարտնչող կուսակցականության դիրքերից։ Օգտագործված փաստաթղթերի ու տվյալների մի զգալի մասը գիտական շրջանառության մեջ է դրված առաջին անգամ։ Աշխատությունն աչքի է ընկնում կուռ շարադրանքով և կարդացվում է մեծ հետաքրքրությամբ։ Նրա կառուցվածքը գիտականորեն հիմնավորված է, իսկ թեմայի հրատապությունը կասկած չի հարուցում։

Գիրքը բաղկացած է նախաբանից, տասը գլուխներից և շարադրված է ըստ Ալ. Մյասնիկյանի կյանքի ու գործունեության գլխավոր փուլերի։ Նախաբանում հեղինակը համառոտակի քննել է իր արծարծած թեմային վերաբերող գրականությունը, տվել նրա նորովի լուսաբանության անհրաժեշտությունը։

Աշխատության առաջին գլխում Ս. Ամիրյանը շարադրել է Ալ. Մյասնիկյանի սկզբնական ուսումնառության պատմությունը և գնահատել հասարակական այն միջավայրը, որում սկսեցին ձևավորվել Ալ. Մյասնիկյանի անհատականությունը, աշխարհայացքն ու քաղաքական համոզմունքները։–ցույց է տվել, թե նա ինչպես հարստացրեց իր դիտելիքները, ծանոթացավ ռուս հեղափոխական-դեմոկրատների գործերին և լիբերալ տատանումներից անցում կատարեց դեպի հեղափոխական—դեմոկրատիզմը։

Գրքի հաջորդ գլուխը նվիրված է Ալ. Մյասնիկյանի ուսումնառության և քաղաքական—հեղափոխական գործունեության մոսկովյան շրջանի (1904—1907 թթ.) պատմության վերլուծությանը։ Այստեղ հեղինակը համոզիչ ճշտել է այն հարցը, թե երբ Ալ. Մյասնիկյանն անցավ մարքսիզմի դիրքերը և երբ և ինչու իր կապերը խզեց «Սոցիալ—դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության» (սպեցիֆիկների կուսակցության) հետ, որին անդամագրվել էր 1905 թ.։ Հեղինակը ցույց է տալիս, որ Ալ. Մյասնիկյանը Լազարյան ճեմարանում ուսանելիս լիովին ծանոթանում է մարքսիստական աշխարհայացքին, կարդում Վ. Ի. Լենինի աշխատությունները և 1905 թ. դառնալով համոզված մարքսիստ, մեկ տարի հետո մտնում է ՌՍԴԲԿ շարքերը։ Բայց նա սպեցիֆիկյան կուսակցությունից չի հեռանում մինչև 1913 թ. (և ոչ թե մինչև 1914—1917 թթ., ինչպես կարծում են ոմանք)։ Սպեցիֆիկների հետ կապերը ժամանակին չխզելու և նրանց մամուլին աշխատակցելու հարցում Ալ. Մյասնիկյանի ցուցաբերած անհետևողականությունը մենագրության մեջ պատճառաբանված է հիմնավորապես։ Հեղինակի կարծիքով, Ալ. Մյասնիկյանը սպեցիֆիկների հետ պահպանում էր գերազանցապես գրական կապեր՝ մարքսիզմը հայ բանվոր դասակարգի մեջ պրոպագանդելու նպատակով, իսկ դասակարգային, կազմակերպական հարցերում նա բոլշևիկյան դիրքերում էր սկսած 1906 թ.։ Ալ. Մյասնիկյանը սպեցիֆիկներից հեռացավ ու հանդես եկավ նրանց հայացքները մերկացնող աշխատություններով, երբ նրա համար լիովին պարզ դարձավ նրանց կազմակերպության մանրբուրժուական, ազգայնական բնույթը, եզրակացնում է հեղինակը։

Այնուհետև մենագրության մեջ հանգամանորեն քննվել է Ալ. Մյասնիկյանի կյանքի և գործունեության 1907—1917 թթ. ժամանակաշրջանը։ Այստեղ լուսաբանված է այն պրոբլեմը, թե ինչու և ինչպես Մոսկվայի համալսարան ընդունվելուց և այնտեղից արտաքսվելուց հետո (1906 թ.) Ալ. Մյասնիկյանը շուտով տեղափոխվեց Բաքու և, կապվելով Ստ. Շահումյանի, Վ. Ֆիոլետովի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի և մյուս բոլշևիկների հետ, տեղի բազմազգ պրոլետարական միջավայրում մոտ երկու տարվա ընթացքում դարձավ պրոֆեսիոնալ հեղափո-

խական։ Ցույց է տրված, որ Բաքվում նա բոլշևիկյան աշխատանք էր կատարում, բանավոր ու գրավոր ելույթներով հանդես էր գալիս բուրժուազգայնական կուսակցությունների, մասնավորապես դաշնակցության ու մենշևիզմի քննադատությամբ։ Բացի այդ, նա հաճախ լինում էր Անդրկովկասի հայաշատ շրջաններում, մասնավորապես Ղորաքիլիսայում, Ղարաբաղում, Թիֆլիսում և այլուր, նպաստում բոլշևիկյան գաղափարների տարածմանը, երկրամասի պրոլետարիատի ինտերնացիոնալ համախմբմանը։

Գրքում հանգամանորեն վեր է հանվել 1908—1914 թթ. Մոսկվայում Ալ. Մյասնիկյանի ուսումնառության և ընդհատակյա բոլշևիկյան գործունեության, ինչպես նաև գրական—հրապարակախոսական աշխատանքի պատմությունը, հիմնավորվել, որ Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի հետ միասին նա դարձավ հայ մարքսիստական գրքննադատության ռահվիրաներից և հիմնադիրներից մեկը հայ իրականության մեջ։ Դրվատվել են հատկապես Մ. Նալբանդյանի մասին Ալ. Մյասնիկյանի գրած աշխատությունները, որոնցում նա առաջիններից մեկն էր, որ ցույց տվեց հեղափոխական դեմոկրատիզմի և սոցիալ—դեմոկրատիզմի միջև եղած կապը։ Թարձր են գնահատված Ալ. Մյասնիկյանի հոդվածները Հ. Հակոբյանի, Շ. Կուրղինյանի, Հ. Հովհաննիսյանի, Ալ. Ծատուրյանի և ուրիշների մասին, պատշաճ արժեքավորվել են կուլտուր—ազգային ավտոնոմիայի վերաբերյալ նրա աշխատությունները։

Մենագրության մեջ այնուհետև տրվել է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ցարական բանակում Ալ. Մյասնիկյանի ծավալած հեղափոխական գործունեության պատմությունը, հմուտ բոլշևիկ կազմակերպչի ու պրոպագանդիստի նրա ընդունակությունների դրսևորման վառ պատկերը։ Ընդգծված է այն փաստը, որ նա Արևմտյան ռազմաճակատում կռվում էր հերոսաբար և ջանասիրությամբ տիրապետում ռազմական արվեստին՝ վերահաս հեղափոխությունների հաղթանակին նպաստ բերելու նպատակով։ Հաջող է ցույց տրվել, թե Փետրվարյան հեղափոխությունից և ցարիզմի կործանումից ու երկիշխանության հաստատումից հետո Ալ. Մյասնիկյանն Արևմտյան ռազմաճակատում ինչպիսի եռանդով էր պայքարում հին բանակի դեմոկրատացման, Վ. Ի. Լենինի ապրիլյան թեզիսների պրոպագանդման և հեղափոխության խաղաղ կուրսի իրագործման համար, թե ինչպես էր նա դառնում խոշոր մասշտաբի կուսակցական գործիչ, ինչ դեր խաղաց կուսակցության VI համագումարում զինվորական հարցի քննարկումը կազմակերպելու և հեղափոխության ոչ խաղաղ, զինված ապստամբության լենինյան կուրսը պաշտպանելու գործում։ Ամենայն մանրամասնությամբ լուսաբանված է նրա դերը բանակի հետագա դեմոկրատացման, Արևմտյան ռազմաճակատում, Բելոռուսիայում, Հյուսիս-արևմտյան մարզում բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորման, սովետների բոլշևիկացման, հեղափոխության բանակի ստեղծման, զինված ապստամբության միջոցով սոցիալիստական հեղափոխության իրականացման գործում։ Գրքում լուսաբանված է նրա ղեկավարողները Բելոռուսիայի կոմկուսի և տեղում սովետական իշխանության ստեղծման գործում, ինչպես նաև նրա ծառայությունները մեծ Հոկտեմբերի նվաճումները պաշտպանելիս, երբ նա արդեն Արևմտյան ռազմաճակատի առաջին ընտրովի գլխավոր հրամանատարն էր, Հարավ-արևմտյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի, ինչպես նաև Սովետական Ռուսաստանի ամբողջ զինված ուժերի գերագույն հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատարը, կուսակցության Հյուսիս-արևմտյան մարզային կոմիտեի ու մարզգործկոմի նախագահը և այլն։

Ս. Ամիրյանի աշխատության մեջ վառ գույներով նկարագրված է, թե Ալ. Մյասնիկյանը կուսակցության կամքով նախ Արևելյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի, իսկ այնուհետև նախ ՌԿ(բ)Կ Մոսկվայի քաղաքային կոմիտեի ռազմական բաժնի վարիչի, քիչ անց այդ կոմիտեի առաջին քարտուղարի պաշտոններում ինչպիսի կարևոր դեր խաղաց կարմիր բանակի շինարարության, Չեխական կորպուսի, ապա Անտանտի արշավանքների չախչախման գործում։ Առանձին սիրով են գրված աշխատության այն էջերը, որոնք պատմում են Վ. Ի. Լենինի հետ նրա հանդիպումների, նրանց ջերմ փոխհարաբերությունների մասին։ Մենագրության մեջ հանգամանորեն խոսվում է այն մասին, թե պատերազմից խաղաղ տնտեսական շինարարությանը թևակոխելու այդ բարդ շրջանում Ալ. Մյասնիկյանն ինչպես շարունակեց դրսևորել կուսակցության ու պետական խոշոր մասշտաբի գործչի իր փայլուն կարողությունները, թե ինչպես նա կուսակցության X համագումարում պաշտպանեց լենինյան տեսակետները, իսկ նախահամագումարյան բանավեճի ժամանակ՝ 10-ի պլատֆորմը։ Մանրամասնությամբ քննված է Հայաստանում կառավարության նախագահի ու ռազմժողկոմի պաշտոններում Ալ. Մյասնիկյանի եռանդուն գործունեությունը հանրապետության քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնման ու վերակառուցման և սոցիալիստական ապագայի կերտման ասպարեզներում։ Առհասարակ գրքի միջով կարմիր թելի պես անցնում է այն գաղափարն ու կասկած չհարուցող ճշմարտությու-

ներ, որ ՌԿ(բ)Կ Կենտկոմը Վ. Ի. Լենինի գիտությամբ Ալ. Մյասնիկյանին քաղաքացիական պատերազմի տարիներին ուղարկում էր այն ռազմաճակատները, որտեղ հայրենիքին առավել մեծ վտանգ էր սպառնում, իսկ խաղաղ տնտեսական շինարարության շրջանում օգտագործում էր այնտեղ, որտեղ ծագած դժվարություններն ավելի շատ էին և անհրաժեշտ էր շտկել դրությունն ու ապահովել սոցիալիստական շինարարության սկսված պրոցեսը։

Գրախոսվող աշխատության մեջ մանրամասն ու համոզիչ վեր է հանված Ալ. Մյասնիկյանի վիթխարի աշխատանքը ՌԿ(բ)Կ X համագումարի որոշումների հիման վրա և Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի հայտնի նամակի ոգով Անդրկովկասում ու Հայաստանում նոր տնտեսական քաղաքականության իրականացման, ժողովուրդների միջև եղբայրական ու ազգային համերաշխության հաստատման, ինչպես նաև Անդրֆեդերացիայի ու ՍՍՀՄ-ի ստեղծման գործում։ Միաժամանակ, բարձր է գնահատված նրա գործունեությունը Սովետական Հայաստանի կառավարության, Անդրկովկասի սովետական հանրապետությունների ֆեդերատիվ միության (դաշնակցային խորհրդի) նախագահի, ՌԿ(բ)Կ Կովկասյան և ապա Անդրկովկասյան երկրային կոմիտեի քարտուղարի, ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահության անդամի պաշտոններում։ Տպավորիչ է արոցկիզմի և հակակուսակցական թեքումների ու հոսանքների, վելիկոռուսական շովինիզմի ու նացիոնալ ուկլոնիզմի, ինչպես նաև բուրժուական ազգայնականության դեմ մղված պայքարում Ալ. Մյասնիկյանի դերի լուսաբանությունը։ Հետաքրքրական են գրքի այն էջերը, որոնցում տրված է Բելոռուսիայում, Մոսկվայում և Անդրկովկասում բոլշևիկյան մամուլի ստեղծման և կուսակցական սովետական ու ռազմական կադրերի պատրաստման բնագավառներում Ալ. Մյասնիկյանի պատկառելի ծառայությունների պատմությունը։ Աշխատության մեջ պատշաճ բնութագրված են Ալ. Մյասնիկյանի հարուստ գրական ժառանգությունը, նրա բարձրարժեք գրական ու հրապարակախոսական ստեղծագործությունները։ Հաշող է գրված նաև աշխատության վերջին մասը, որը նվիրված է Ալ. Մյասնիկյանի ողբերգական մահվան հանգամանքների և նրա հիշատակի հավերժացման պատմությանը։

Աշխատության մեջ հեղինակը շատ փաստեր լուսաբանել է նորովի, ուղղել գրականության մեջ տեղ գտած բազմաթիվ անճշտություններ։ Սակայն աշխատությունը զերծ չէ նաև առանձին թերություններից ու վրիպակներից։ Լրացուցիչ ապացույցների կարիք ունի հեղինակի այն պնդումը, թե Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը սխալ էր, և եթե Ալ. Մյասնիկյանը ավելի շուտ դար Հայաստան, այդ քաղաքականությունը չէր կիրառվի։ Ճանկալի կլիներ, որ հեղինակն ավելի մանրամասն անդրադառնար ռազմական օպոզիցիայի մասին ՌԿ(բ)Կ VIII համագումարի նյութերին։

Ընդհանուր առմամբ գրախոսվող մենագրությունը հաջողված ու բարձրարժեք գիտական աշխատություն է և կարևոր նշանակություն ունի աշխատավորության, մանավանդ երիտասարդության կոմունիստական դաստիարակության, ինչպես նաև կուսակցության, սովետական տնտեսական ու ռազմական կադրերի ուսուցման գործում։

ՎԱԴԻՄԻՐ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր